Ճակատամարտը դեռ չէր լրացած, բայց արդէն ժամը 12 էր, և կուռղ կողմերը կանգ առին իրենց գրաւած տեղերում։ Պատերազմը վերջանում էր։

Ո՞վ էր յաղթողը այս պատերազմում։ Վրացիները պնդում են, որ դեկտ. 31-ի ճակատամարտը վերջացաւ իրենց յաղթանակով։ Եթէ պայմանաժամը չլրանար, ասում են նրանք, վրաց զօրքը առաջ կերթար յաղթական, և հայկական բանակի կատարեալ պարտութիւնը կը դառնար անխուսափելի։ Ո՛չ, պատասխանում են հայերը, եթէ պայմանաժամը չլրանար, հայ զօրքերը յաջողութեամբ կիրականացնէին շրջափակման ծրագիրը, և զօր. Մադնիևի զօրքերը ամբողջովին դերի կընկնէին հայերի ձեռքը։

Վրացիները ասում են՝ մենք յաղթեցինք, հայերը ասում են՝ մենք յաղթեցինք։ Ո՞ւմն է իրաւունքը։ Պատասխանը թո՛ղ ռազմագէտները տան. ճակատամարտի դաշտի քարտէսը երկու կողմին էլ հիմք է տալիս մնալու իր համոզման մէջ։

Եւ, իրօք, ուշադրութիւն դարձրէ՛ք ճակատամարտի քարտէսի վրա՝ ուժերի ի՜նչ տարօրինակ դասաւորութիւն։ Հայ ու վրացի զօրամասերը խառնուել են իրար. վրացիները մտել են շատ խորունկ հայկական շրջանը, հայերը սպառնական՝ անցել են վրացիների թիկունքը։ Կը դիմանայի՞ն Կորոլկովի զօրամասերը վրացական դրոհին, կը կարողանայի՞ն վրացիները մաքրել թիկունքը հայկական խուժումից. կը կարողանա՞ր Մադնիևը տոկալ Դբօի հարուածին։ Այս հարցերը մնում են անպատասխան*)։



*) Ինչքա՞ն էր մարդկային կորուստը պատերազմում — դժուար է ասել։ Մեր ձեռքն ընկած պատահական տեղեկութիւններից երևում է, որ միայն 4-րդ գնդից սպանուել էր 41